գտնվում է նաև Պետական մատենադարանի երկու այլ ձեռագրերում, նույնությամբ։ Սույն ձեռագիրն ընդօրինակված է 1449 թվականին, այսինքն Գր. Տաթևացու մահվանից 39 տարի հետո։ Պետք է ենթադրել, սակայն, որ նկարը կամ ընդօրինակված է ավելի հնագույն (Տաթևացու կենդանության օրոք արված) բնագրից և կամ դրված է ձեռագրի մեջ՝ այլ ձեռագրից։ Վերջինս հնարավոր է, որովհետև նկարի թերթը մագաղաթյա է, երբ ձեռագիրն ամբողջությամբ թուղթ է և իր չափերով այդ մագաղաթե թերթը փոքր է ձեռագրի թերթերից»[2]։

Արդյոք Գր. Տաթևացու վերոհիշյալ նկարի մագաղաթե թերթի փոքրությունը որոշ չափով չի՞ հաստատում այն տեսակետը, որ սա ավելի հին է, քան 1449 թվականինը և կատարված է նրա կենդանության ժամանակ։ Նկարի ոճը և գույնային լուծումն էլ համապատասխան չեն այդ ձեռագրի մյուս մանրանկարների ոճին և գույնային լուծմանը։

Մի քանի խոսք էլ կազմի վրայի փորագրանկարի (F կող) մասին։ Ճիշտ է, թե այս փորագրության վրայի Որոտնեցու և Տաթևացու նկարները փորագրված են ձեռագրի գրվելուց հետո և նրանց գտնվելությունը շատ նման է 329բ էջի մանրանկարին, սակայն հրբ ուշադրությամբ դիտում ենք այս 3 նկարները (1374 թ. ձեռագրի մանրանկարը, կազմը և 1449 թ. Կաֆայի ձեռագրի նկարը) նկատվում է, որ ոսկե կազմի վրայի նկարը՝ Գրիգոր Տաթևացու դեմքի ստորին մասը, մորուքը և բեղերը բավական նման են 1449 թ. ձեռագրի նկարին, այսինքն՝ Տաթևացին այստեղ երևում է ավելի հասակավոր։ Արդյո՞ք այս կազմը պատրաստված չէ նրա մահվանից առաջ, մոտավորապես 1400—1405 թթ.։

Կարող ենք ասել, որ այս ոսկե ձեռագրակազմը XV դարի սկզբի գործ է և նրա վրայի՝ Գրիգոր Տաթևացու դիմանկարը թեև արտանկարված է 329ա նկարից, բայց Տաթևացու տարիքը ենթադրել է տալիս, որ փորագրիչը այն կատարել է նրա կենդանության օրոք։

Հ. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԲԱԶՄԱՆԻՍՏ ԿՆԻՔՆԵՐԸ

Վերջին տարիներս պեղումների շնորհիվ և պատահարար Հայաստանի տարբեր վայրերից հայտնաբերվել են քարից ու ապակուց պատրաստված ինքնատիպ ձևի, բազմանիստ կնիքներ, որոնք օգնում են հարստացնելու ուշ աքեմենյան շրջանի մշակույթի վերաբերյալ մեր գիտելիքները։ Բրգաձև, բազմանիստ քարե կնիքներ արտադրվել են միայն Փոքր Ասիայում V դարի վերջերին և IV դարում (մ. թ. ա.)։ Դրանք ուսումնասիրողների կողմից առանձնացված են «Հունա-պարսկական քարեր» անվան տակ։ Չնայած այդ տերմինն ընդունված է, սակայն այդ կնիքների ծագման վերաբերյալ գիտնականների միջև տարակարծություն կա։ Ա. Ֆուրտվենգլերը գտնում է, որ հունա-պարսկական փորագիր քարերը պատրաստված են պարսիկների համար աշխատող հույն վարպետների կողմից[2]։ Սակայն Տ. Ն. Կնիպովիչը, առարկելով այդ տեսակետի դեմ, ցույց է տալիս, որ փորագրության տեխնիկական ձևերով, գեղարվեստական ոճով հունա-պարսկական քարերը ավելի կապված են պարսկական, քան հունական գլիպտիկայի (գունավոր քարերի վրա փորագրելու արվեստի) հետ, ուստի տվյալ խմբին վերագրում է պարսկական ծագում։ Մ. Ի. Մաքսիմովան հիմնականում համաձայնելով Տ. Ն. Կնիպովիչի հետ, այդ քարերը համարում է պարսկական կնիքների հատուկ մի խումբ՝ պատրաստված Փոքր Ասիայում, հունական ազդեցությամբ, այսինքն հունական արվեստին ծանոթ պարսիկ վարպետների կողմից[4]։ Ռիխտերը փաս-

---

2 Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1955, էջ 642։

[1] Այդ տերմինը, որ հետագայում ընդունվել է բոլոր ուսումնասիրողների կողմից, առաջինն օգտագործել է Ա. Ֆուրտվենգլերը, դրա տակ հասկանալով կնիքների հատուկ խումբ։ Furtwangler A., Die Antiken gemmen, Geschichte der Steinschneidekunst in Klassischen Altertum, Leipzig—Berlin, 1900, էջ 117։

[2] Նույն տեղում, էջ 117 և հա.։

[3] Книпович Т. Н., Греко-персидские резные камни Эрмитажа, Сборник Гос. Эрмитажа, 1926, էջ 41—58։

[4] Maximowa M. I., Die Griechisch-persiche Kleinkunst in Kleinasien nach den Perserkriegen, Archaologischer Anzeiger, 3/4 Berlin, 1928, էջ 649—678։

Максимова М. И., Стеклянные многогранные печати, найденные на территории Грузии, Известия института языка истории и материальной культуры Грузии, АНГССР, № 10, 1941, էջ 77, տես. 2 և 78։

տորեն Ա. Ֆուրտվենգլերի տեսակետն է պաշտպանում, գտնելով, որ հունա-պարսկական քարերը բավականին նուրբ են պատրաստված՝ պարսկական վարպետների գործ համարվելու համար, և որ դրանք փոքրասիական հույն վարպետների արտադրանքն են պարսիկ պատվիրատուների համար[5]։ Մենք Մ. Ի. Մաքսիմովայի տեսակետն ավելի հավանական ենք համարում։ Իրոք, այս բարձրարժեք գործերը պիտի համարել Փոքր Ասիայի և սահմանակից երկրների բազմացեղ բնակչության և հատկապես հույների ու պարսիկների փոխազդեցության արդյունք։

Փոքր Ասիայի բազմաթիվ գեղարվեստական ոճերի երկու գլխավոր ուղղություններից՝ հունական փոքրասիական գլիպտիկան պահպանեց հունական ոճի անաղարտությունը, փոխառնելով, սակայն, պարսիկներից պատկերների շատ սյուժեներ և կնիքների մի քանի ձևեր։ Փոքրասիական պարսիկ վարպետները, կրելով հունական գլիպտիկայի հայտնի ոճական ազդեցություն, հստակապես կոմպոզիցիայի մեծ ազատության բնագավառում, շարունակեցին հետաքրքրվել միայն պարսկական կյանքի ու կրոնի հետ կապված թեմաներով։

Այդ շրջանում Փոքր Ասիայում պատրաստում էին նաև տեխնիկապես ավելի կոպիտ կնիքներ, գեղարվեստական պակաս վարպետությամբ, մասամբ ինքնուրույն թեմաների, ոճի և ձևի բնտրությամբ, բայց հիմնականում արևելա-հոնիական դեմմաների օրինակով։ Դրանք համարվում են տեղական, փոքրասիական ժողովուրդների գործ[6]։

Այդ խմբերի մեջ կան որոշ տարբերություններ։ Հունա-պարսկական և արևելա-հոնիական քարերն իրենց ներքին մակերեսով գրեթե քառակուսի են, մինչդեռ տեղական արտադրության բազմանիստ կնիքի երկարությունը նշանակալիորեն, երբեմն կրկնակի չափով ավելի է լայնությունից։ Առաջինները մշտապես զարդարվել են պատկերներով ոչ միայն ներքին մակերեսում, այլև թեք կողերի և երբեմն նույնիսկ վերին մասերում։ Հակառակ դրան, տեղականների պատկերները միշտ գտնվում են կնիքի ներքին մակերեսին, իսկ մնացած կողերը խնամքով հղկված են։

Ապակյա բրգաձև բազմանիստ կնիքները, որոնցից մեծ քանակությամբ գտնվել են Վրաստանում[8], նաև Ադրբեջանում (Մինգեչաուրում 3 հատ) և Հայաստանում (3 հատ), ունեն նույնպիսի սյուժեներ, ինչպիսիք հունա-պարսկական և փոքրասիական քարե կնիքները։ Բրենց հետ հայտնաբերված նյութերի հիման վրա սրանք ևս թվագրվում են նույն ժամանակաշրջանով։ Քննությունից պարզվել է, որ մուգ կապույտ և երկնագույն ապակուց պատրաստված բազմասիստ կնիքները ընդօրինակվել են քարե բազմանիստ կնիքներից։ Ապակյա կնիքներ վաղուց էին հայտնի, սակայն, այս շրջանում, որպես փոխարինիչ, ապակին ավելի լայն տարածում է ստանում[10]։ Տեխնիկայի պարզեցումը հնարավորություն էր տալիս դժվար և շատ աշխատանք պահանջող քարե կնիքները փոխարինել ավելի հեշտ և մեծ թվով արտադրվող ապակյա կնիքներով։ Դրանք ձուլվում էին մոմի օգնությամբ, քարե կնիքից հանված կաղապարում, որից հետո վարպետը հղկելու միջոցով տալիս էր նրան ցանկացած ձևը։ Աքեմենյան շրջանում շատ էր օգտագործվում կապույտ խալցեդոնը (լազուրիտ), որը պարսիկներից փոխ են առել նույնիսկ հույն վարպետները[11], ուստի ձուլող վարպետներն աշխատել են բազմանիստ կնիքին տալ բնօրինակի ձևն ու գույնը։

---

[5] Richter G. M. A., Catalogue of Engraved Gems, Greek, Etruscan and Roman, Roma, 1956, էջ 33։

[6] Maximowa M., Die Griechisch-persische Kleinkunst in Kleinasien, էջ 675։

[7] Максимова М. И., Стеклянные многогранные печати, էջ 78—79։

[8] Максимова М. И., Նշվ. աշխ., էջ 75, 79 և հա.։ Максимова М. И., Геммы из некрополя Мцхета-Самтавро, Вестник гос. музея Грузии, т. XVI, В, Тбилиси, 1950, էջ 263. Лордкипанидзе М. Н., Геммы государственного музея Грузии, III, 1961, էջ 72 և հա., Лордкипанидзе М. Н., Иберийские копии с малоазийских гемм позднеахеменидского времени, Вестник отделения общественных наук АН ГССР № 6. 1963.

[9] Максимова М. И., Стеклянные многогранные печати, էջ 75, 88 և հա., Лордкипанидзе М. Н., Геммы гос. музея Грузии, III, 44—47; Лордкипанидзе М. Н., Иберийские копии с малоазийских гемм, էջ 134 և հա.։

[10] A. Furtwangler, Նշվ. աշխ., էջ 119, 135, 151 և այլուր։

[11] Максимова М. И., Античные резные камни Эрмитажа, Ленинград, 1926, էջ 52։

Հայաստանում հայտնաբերված բազմանիստ կնիքները հինգն են. երկուսը՝ քարից, երեքը՝ ապակուց։ Քարե կնիքներից մեկը գտնվել է Դվինում[12], կարասային թաղումից, մյուսը՝ Գառնիում[13], դամբարանից։ Դվինից հայտնաբերված բազմանիստ կնիքը[14] (նկ. 1) պատրաստված է կանաչավուն կարծր քարից, երկայնքով կենտրոնից թելի համար ունի անցք, անկյունից քիչ թերի է, որը, սակայն, պատկերի ամբողջականությունը չի խախտում։ Ներքին մակերեսին պատկերված է հեծյալ պարսիկի մենամարտը հետիոտն հույն զինվորի հետ։ Հեծյալի աջ կողքից վազում է շունը(?)։ Ձին առջևի ոտքերը պարզած գտնվում է թռիչքի վիճակում։ Հեծյալն աջ ձեռքով բռնած երկար նիզակն ուղղել է հետիոտն զինվորի դլխին։ Վերջինս նույնպես հարձակվում է աջ ձեռքում եղած նիզակով, որի պոչն է երևում։ Հետիոտնը քիչ առաջ թեքված հենվել է ձախ ոտքի վրա, ձախ ձեռքին կրում է վահան։

Նկ. 1

Դվինի բազմանիստ կնիքի պատկերը կառուցված է ազատ կոմպոզիցիայով։ Պատկերները տեղավորված են տարբեր պլանի վրա։ Ներքին մակերեսը մոտենում է քառակուսու։ Պարսիկների հաղթական մենամարտը իրենց թշնամիների հետ պատկերելը եղել է հունա-պարսկական քարե կնիքները փորագրող վարպետների սիրած թեմաներից մեկը[15]։ Սակայն այդ վարպետները հույներից փոխառնելով պատկերներն ազատ կոմպոզիցիայով կառուցելու եղանակը, միևնույն ժամանակ չեն կարողացել ազատվել շարժումներն ու կեցվածքները պատկերելու սխեմատիկությունից։ Դրանք գրեթե միշտ տրված են պայմանականորեն[16]։ Սխեմատիկ են նաև Դվինի բազմանիստ կնիքի պատկերները։ Այստեղ հեծյալի իրանը համեմատաբար երկար է, ոտքերը՝ կարճ, ձիու առջևի ոտքերը երկար են, ընդհանուր առմամբ ձին հեծյալի համեմատ փոքր է, պոչը գրեթե չի երևում, ըստ երևույթին, պարսկական սովորության համաձայն հանդուցված է[17]։ Չնայած ձին գտնվում է թռիչքի վիճակում, մարմինն այդ չի արտահայտում, այն անշարժ է, իսկ դեմքն անկենդան։ Հեծյալի կողքից վազող շունը (?) չափերով անհամեմատ մեծ է պատկերված։ Հետիոտնը հեծյալի համեմատությամբ շատ բարձրահասակ է ու խոշոր։

Այսպիսով, Դվինի կնիքն իր գեղարվեստական ոճով, սյուժեով, պատրաստման տեխնիկայով ու քառակուսուն մոտեցող ներքին մակերեսով անպայմանորեն կապվում է հունա-պարսկական քարե կնիքների հետ։ Դվինի բազմանիստին իր պատկերով շատ նման է Գ. Ռիխտերի հրատարակած մի սկարաբեոիդի վրայի պատկերը։ Նրա ներքին մակերեսում ևս հեծյալ պարսիկը մենամարտում է հետիոտն հույնի հետ. թվագրվում է մ. թ. ա. V դ. II կեսով[18]։ Մ. թ. ա. V դ. II կեսով են թվագրվում նաև նման սյուժեներ ունեցող մյուս հունա-պարսկական քարե կնիքները[19]։

---

[12] Ղաֆադարյան Կ. Գ., Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 82, նկար 57։

[13] Аракелян Б. Н., Гарни I, 1951, էջ 51, նկ. 42։

[14] Երկ.՝ 18 մմ., լայն.՝ 15 մմ., հաստ.՝ 6 մմ., անցքի լ.՝ 3 մմ.։

[15] Furtwangler A., Նշվ աշխ., տախտ. XII, № 17, 18; Максимова М. И., Античные резные камни Эрмитажа, տախտ. 1, № 12, Richter G. M. A., Ancient Gems, from the Evans and Beatty Collections, New York, 1942, № 30; Richter G. M., The Late „Achaemenian or „Graeco-Persian" Gems, Hesperia, Supplement VIII, 1949, տախտ. 34, № 2; Richter G. M. A., Catalogue of Engraved Gems, տախտ. XXII, № 134, 135.

[16] Максимова М. И., Стеклянные многогранные печати, էջ 80։

[17] Նույն տեղում։

[18] Richter G. M., The Late „Achaemenian or „Graeco-Persian" Gems, էջ 294, տախտ. 34, № 4; Richter G. M., Catalogue of Engraved Gems, էջ 34, տախտ. XXII, № 134։

[19] Richter G. M., Ancient Gems, № 30; Richter G. M., The Late „Achaemenian or „Graeco-Persian" Gems, էջ 294, տախտ. 34, № 2; Richter G. M., Catalogue of Engraved Gems, էջ 35, տախտ. XXII, № 135; Максимова М. И., Античные резные камни Эрмитажа, տախտ. 1, № 12, A. III, 6.

Մեր կարծիքով Դվինի բազմանիստը մ. թ. ա. V դ. կեսով պիտի թվագրել. այս ժամանակագրությանը չեն հակասում նաև կնիքի հետ գտնված հնագիտական նյութերը[20]։

Գառնիից[21] գտնված կապույտ խալցեդոնից պատրաստված բազմանիստի (նկ. 2 կողերից. հատկապես երկայնքից, կտրված է) ներքին մակերեսին պատկերված է առյուծ, որը թաթը գրել է արագ վազող կենդանու գավակին։ Փախչող կենդանու պարանոցը, գլխի մի մասի հետ, և առջևի ոտքերը, ինչպես նաև առյուծի ետևի ոտքերն ու պոչը չեն պահպանվել։ Պատկերն ամբողջացնելուն օգնում է Արկնետիում[22] գտնված նույնանման պատկերով ապակյա բազմանիստ կնիքը։ Երկու կենդանին էլ գտնվում են սրընթաց վազքի վիճակում, առջևի կենդանին եղնիկ է, որը գլուխը ետ է դարձրել և նայում է հետապնդող առյուծին։ Պատկերը շատ անկենդան է, սխեմատիկ առյուծի բաշը պայմանական, կենդանիների ոտքերը ուղիղ գծերով պատկերված։ Չնայած վազքի վիճակին, շարժում չկա. երկուսի մարմնի մասերն էլ անհամաչափ են, վզերը երկար։

Նկ. 2

Հունա-պարսկական և փոքրասիական բազմանիստ կնիքների վրա հաճախ են պատկերել սիրած կենդանիներին, առանձին կամ միասին։ Տարածված թեմաներից մեկն է եղել առյուծի պայքարը եղջերվի հետ։ Այդ կոմպոզիցիան վաղուց ընդունվել է հունական արվեստի կողմից և VI—IV դդ. (մ. թ. ա.) հաճախ է պատկերվել հունական արևելահոնիական կնիքների[23] և Փոքր Ասիայի հունական քաղաքների, պարսկական սատրապների և Կիպրոսի թագավորների կողմից կտրված դրամների վրա[24]։ Նկատի ունենալով, որ պատկերն արդեն ձևավորված տեսքով հանդիպում է ասորական կնիքների վրա, ենթադրվում է, որ այն ստեղծվել է Առաջավոր Ասիայում և ունեցել է սիմվոլիկ նշանակություն, արտահայտելով կյանքի ու մահվան պայքարը[25]։ Մ. Լորդկիպանիձեն իրավացիորեն գտնում է, որ Արկնետիի ապակյա բազմանիստի օրիգինալը պետք է եղած լինի փոքրասիական տեղական կնիք և թվագրում է VI—V դդ. (մ. թ. ա.)[26]։ Գառնիի քարե կնիքի պատկերին շատ նման է նաև Էրմիտաժում պահվող տեղական, փոքրասիական համարվող սերգոլիկից պատրաստված բազմանիստի պատկերը։ Գորիի շրջանից հայտնաբերված նույնանման պատկերով ապակյա կնիքը ևս Մ. Ի. Մաքսիմովան համարում է փոքրասիական կնիքի ընդօրինակություն[27]։ Մեր կարծիքով, Գառնիի բազմանիստ կնիքը թե՛ նյութով, թե՛ լայնքից կրկնակի անդամ երկար ձևով, և թե՛ ոճական առանձնահատկությամբ ու պատրաստման տեխնիկայով անկասկած փոքրասիական, տեղական խմբին է պատկանում։ Այն պետք է համարել V դ. (մ. թ. ա.) գործ։ Արկնետիում հայտնաբերված կնիքը ճշտությամբ կրկնում է Գառնիի քարի վրայի պատկերը, ուստի շատ հնարավոր է, որ վերջինս եղած լինի նրա նախօրինակը։ Այդ հարցին ճիշտ պատասխան տալու համար հարկավոր է համեմատել պատկերների չափերը, որի հնարավորությունը մենք չունենք, քանի որ Գառնիի կնիքը թերի է։ Մ. թ. ա. V—IV դդ. են թվագրվում նաև նման թեմատիկա ունեցող Վրաստանում հայտնաբերված մյուս կնիքները[28]։

---

[20] Ղաֆադարյան Կ. Գ., Նշվ. աշխ., նկ. 57։

[21] Գտնվել է I դ. գերեզմանից, բայց հեղինակն իրավացիորեն ենթադրում է, որ այն ավելի վաղ շրջանի է և հետագայում օգտագործվել է իբրև ուլունք։ Երկ.՝ 15 մմ., լայն.՝ 10 մմ., հաստ.՝ 6 մմ., անցք.՝ լ. 2 մմ։

Аракелян Б. Н., Гарни I, էջ 51, նկ. 42։

[22] Лордкипанидзе М. Н., Иберийские копии с малоазийских гемм, տախտ. II, № 18.

[23] Walters, Catalogue of Engraved Gems of the British Museum, London, № 540; Furtwangler A., Նշվ. աշխ., տախտ. XI_{22}; Burlington, Fine Art Club (տալաս), տախտ. 110 M.

[24] Imhoof-Blumer und Keller, Tier-und Pflanzenbilder auf Gemmen und Münzen, տախտ. II_{24}; Babelon E, Les Perses Achemenides, տախտ. 5, 1. Head, Historia Numorum, էջ 89 և 739։

[25] Weber O., Altorientalische siegelbilder, №№ 365—367.

[26] Лордкипанидзе М. Н., Նշվ. աշխ., էջ 142 և հտ.։

[27] Максимова М. И., Стеклянные многогранные печати, էջ 83 և հտ., նկ. № 6, 7։

[28] Лордкипанидзе М. Н., Նշվ. աշխ., էջ 142 և հտ.։

Մ. Ի. Մաքսիմովան այն կարծիքին է, թե հինգ կնիքների բրդանման բազմանիստ ձևը փոքրասիական ծագում ունի, որի արմատները գալիս են դեռևս II հազարամյակից (մ. թ. ա.), քանի որ միայն խեթական կապադովկիական կնիքների մեջ կան այնպիսի ձևեր, որոնք կարող են համարվել բազմանիստների նախատիպերը։ Դրանք երկթևք տանիքի ձև ունեցող կնիքներն են[29] և, ըստ Մ. Մաքսիմովայի, Վրաստանում հայտնաբերված ապակյա կնիքների օրիգինալները պետք է փնտրել Փոքր Ասիայի արևելյան շրջաններում[30]։

Հայաստանն իր աշխարհագրական դիրքով մտնում էր հունա-պարսկական և փոքրասիական քարե կնիքներն ստեղծող երկրների ոլորտի մեջ, ուստի շատ հավանական է, որ կազմավորվող հայ ժողովուրդը ևս իր լուման է ներդրել այդ գործում, և Հայաստանը նույնպես հանդիսացել է արտադրության կենտրոններից մեկը ինչպես քարե բազմանիստների, այնպես էլ ապակյա կրկնօրինակների համար։

Մեր ապակյա կնիքները զարդարված են կենդանական պատկերներով։ Դրանցից մեկը[31] (ՊՊԹ 1561/5) պատրաստված է երկնագույն ապակուց և գույնով ու նյութերով այնքան նման է նախորդ լազուրիտե կնիքին, որ դժվար է տարբերել։ Ներքին մակերեսին պատկերված է դեպի ձախ քայլող ձի, որի առաջ կանգնած է եղջերու (նկ. 3)։ Նախորդի նման պատկերը շատ սխեմատիկ է, կենդանիների ոտքերը ցույց են տրված ուղիղ գծերով։ Մարմինների մանրամասնությունները չեն արտահայտված, շարժման ընթացքում գտնվող ձիու իրանն անշարժ է, պոչը՝ կարճ կապված։ Եղջերուն պատկերված է առջևից, համեմատաբար խոշոր ու կոպիտ, գլուխը մի կողմ թեքած։ Նման պատկերով կնիքներ հայտնաբերվել են Վրաստանում՝ Սամթավրոյում, Լոճինում, Արկնետիում[32]։

Նկ. 3

Լենինականի բազմանիստն իր ներքին մակերեսով լայնքի կրկնակի երկար ձևով, պատկերի մշակման առանձնահատկություններով, թեմատիկայով, մեր կարծիքով, հանդիսանում է փոքրասիական, տեղական քարե կնիքի կրկնօրինակը և այն պետք է թվագրել V—IV դդ. (մ. թ. ա.)։ V—III դդ. (մ. թ. ա.) են թվագրվում Վրաստանից հայտնաբերված ապակյա նման բազմանիստները[33]։



Նկ. 4

Մյուսը (նկ. 4, գտնվել է Մահմուզջուղ գյուղից) նույնպես պատրաստված է երկնագույն ապակուց[34] (ՊՊԹ 1631/34) և նախորդի նման գույնով բոլորովին չի տարբերվում Գառնիի կնիքից, անցքի երկայնքով կոտրված է։ Պատկերված է մեջքին թռչուն կանգնած եղջերու, որի մարմինը պարանոցից ցած, չի պահպանվել, գավակն է հազիվ նկատելի։ Բազմանիստ կնիքի ամբողջական պատկերը վերականգնելուն օգնում են Վրաստանում հայտնաբերված ապակյա նույնանման պատկերներով կնիքները[35]. եղջերուն պատկերված է արագ վազքի ընթացքում, մեջքին (գավակի՞ն) կանգնած է թևերը ցած իջեցրած թռչուն, առջևի ոտքերը լայն բացած վիճակում առաջ են պարզված, որոնք մարմնի հետ գտնվում են գրեթե

[29] Hogarth D. G., Hittite Seals with Particular Reference to the Asmolean Collection, Oxford, 1920; Contenau G., La Gliptique Syro-Hittite, Paris, 1922, էջ 93.

[30] Максимова М. И., Նշվ. աշխ., էջ 89 և հտ.։

[31] Գտնվել է Լենինականի մսի կոմբինատի շինարարության ժամանակ 1938 թ. Երկ.՝ 17 մմ, լայն.՝ 9 մմ, հաստ.՝ 7 մմ, անցք. լ.՝ 3 մմ։

[32] Максимова М. И., Геммы из некрополя Мцхета-Самтавро, էջ 263, № 65; Лордкипанидзе М. Н., Геммы Гос. музея Грузии, III, տախտ. VII, № 50; Лордкипанидзе М., Иберийские копии с малоазийских гемм, տախտ. I, № 9, 10, 11.

[33] Лордкипанидзе М. Н., Геммы Гос. музея Грузии, III, էջ 75, № 50; Лордкипанидзе М. Н., Иберийские копии с малоазийских гемм, էջ 141 և հտ., տախտ. 1, № 9, 10, 11.

[34] Երկ.՝ 17 մմ, լայն.՝ 6 մմ, հաստ.՝ 7 մմ։

[35] Лордкипанидзе М. Н., Геммы Гос. музея Грузии, III, տախտ. VII, № 48; Лордкипанидзе М., Иберийские копии с малоазийских гемм, տախտ. I. № 5, 6.

նույն գծի վրա, ետևի ոտքերը չեն դիպչում գետնին, բայց գլուխն անշարժության մեջ է։ Այս տիպի քանդակը բնորոշ է հունա-պարսկական փորագրող վարպետներին, սակայն պատկերների անկենդան քարացած տեսքը, շարժումների սխեմատիկ արտահայտումը, փորագրության ոճը, առանձին մանրուքների անմշակությունը այն կապում են փոքրասիական տեղական կնիքների հետ, ուստի պետք է ենթադրել, որ սա այդ խմբին պատկանող քարե կնիքից է ընդօրինակվել, և, ինչպես Վրաստանի օրինակները[36], թվագրվում է V—IV դդ. (մ. թ. ա.)։ Նման սյուժե հանդիպում է սիրիա-կապադովկիական գլիպտիկայում, այն տարբերությամբ միայն, որ այնտեղ եղջերվի եղջյուրների մեջ շրջանակ է փորագրված, իսկ թռչունի մեջքի վրա՝ էլիպսաձև պատկեր[37]։

Երրորդ բազմանիստը[38] (նկ. 5) մուգ կապույտ, մանիշակագույնին տվող ապակուց է, երկայնքից կոտրված։ Ներքին մակերևսում պատկերված է դեպի ձախ արագ վազող, գավակին թռչուն կանգնած ձի։ Թեման նույնն է, ինչ որ նախորդիները, միայն այստեղ եղջերվի փոխարեն պատկերված է ձի, որի գավակը ոտքերի հետ միասին և թռչունի ետևի մասը չի պահպանվել։ Ձիու ճակատից, եղջերվի եղջյուրների նման, բայց ավելի լայն, ինչ որ ձվաձև թումբ է ձգված։ Ձին, նախորդ կնիքի եղջերվի նման, ոտքերը բաց վիճակում առաջ է պարզել մարմնի հետ գրեթե ուղիղ գծի վրա, սակայն այստեղ կենդանու մարմնի համաչափությունը լավ է պահպանված, մանրամասնությունները մշակված են, բայց կենդանիների գլուխները որոշ անկենդանություն ու քարացածություն ունեն։ Թռչունի միայն կուրծքն ու գլխի առջևի մասն է երևում, այնպես որ ավելին նկատել հնարավոր չէ։ Կնիքի ներքին մակերևսը պետք է մոտ լիներ քառակուսուն։ Գեղադիրի բազմանիստն իր սյուժեով, գեղարվեստական ոճով և պատրաստման տեխնիկայով անտարակույս կապվում է հունա-պարսկական խմբի հետ և ընդօրինակված է այդ խմբի քարե կնիքից։ Նույն սարկոֆագից գտնված Ալեքսանդր Մակեդոնացու դրամի օգնությամբ այն թվագրվում է IV դ. (մ. թ. ա.) վերջով։

Նկ. 5

Այսպիսով, ուսումնասիրվող քարե և ապակե բազմանիստ կնիքների վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանք սերտորեն կապված են Փոքր Ասիայի ուշ աքեմենյան շրջանի գլիպտիկայի հետ։ Դրանցից Դվինի քարե բազմանիստ կնիքը հունա-պարսկական քարերի խմբին է պատկանում, իսկ Գեղադիրի ապակյա բազմանիստն ընդօրինակված է նույն խմբի քարե կնիքից։ Մյուս երեքը փոքրասիական տեղական ծագում ունեն և շատ հավանական է, որ պատրաստվել և կրկնօրինակվել են Հայաստանում։

Ներկայումս հնագիտական նոր պեղումների շնորհիվ հայտնի է դարձել, որ բազմանիստ կնիքները ունեցել են տարածման մեծ շրջանակ։ Հունա-պարսկական կնիքներ են հայտնաբերվել Պարսկաստանում, Փոքր Ասիայում, Լիդիայում, Անատոլիայում, Հունաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, Հայաստանում և նույնիսկ Հնդկաստանում[39] (Տաքսիլայում)։ Այդ կնիքները, որոնց թեմատիկան վերցված է պարսկական կյանքից, Պարսկաստանի ու Փոքր Ասիայի կենոանա-

---

[36] Лордкипанидзе М. Н., Геммы Гос. музея Грузии, III, էջ 75, № 48; Лордкипанидзе М., Иберийские копии с малоазийских гемм, էջ 139 և հտ., № 5, 6, որտեղ հեղինակը ինչպես այս, այնպես էլ նախորդ բազմանիստը համարում է Վրաստանից բերված (էջ 142, 151, ծանոթ. 32, 53)։ Մեր կարծիքով դա ոչ միայն անհավանական է, այլև կարող է ընդհակառակը լինել, քանի որ ապակյա բազմանիստի մի քարե օրիգինալ արդեն անվիճելիորեն ունենք (Գառնիից գտնված խալցեդոնե կնիքը) և ինչպես վերը նշեցինք, պետք է որ Հայաստանն ունենար նման քարե և ապակե կնիքների արտադրություն։ Դժբախտաբար Հայաստանի այդ շրջանի հուշարձանները Վրաստանի հետ համեմատած դրեթե չեն ուսումնասիրված։ Հուսանք, որ հետագա ուսումնասիրությունները կօգնեն ավելի որոշակի պատասխան տալու այդ հարցին։

[37] Delaporte L., Catalogue des Cylindres et des Cachets orientaux, Acquistions, Paris, 1926, աստ. 103, A 1065, 1066.

[38] Գտնվել է 1963 թ. Գեղադիրում, սարկոֆագից, մեր կողմից կատարված պեղումների ժամանակ։ Երկ.՝ 15 մմ, լայն.՝ 15 մմ, հաստ.՝ 8 մմ, անցք. ս.՝ 2 մմ։

[39] A. Furtwangler, Die Antiken Gemmen, էջ 117, 118, Maximowa M., Die Griechisch-persische Kleinkunst, էջ 619 և հտ.։ Максимова М. И., Стеклянные многогранные печати; Richter G. M., Catalogue of the Engraved Gems of the Clas-

կան աշխարհից, մեզ պատկերացում են տալիս պարսիկների նախասիրությունների, զրաղմունքի, հանդերձանքի, սիրված կենդանիների (կենդանական աշխարհի), պատկերացումների մասին։ Դրանց լայն տարածումը դրսևորում է հին աշխարհի երկրների ու ժողովուրդների առևտրական կապերը և մշակութային փոխհարաբերություններն ու փոխազդեցությունները, որոնց անմասն չի եղել նաև Հայաստանը։

Ժ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՑԵՂԵՐԻ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ

(Սևանի ավազանի նյութերի հիման վրա)

Մ. թ. ա. II հազարամյակի երկրորդ կեսը բնորոշ է ցեղային հզոր միությունների կազմավորմամբ։ Ցեղային առաջնորդների ու ռազմական դամբարանների և հարակից այլ նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք վաղուց արդեն տաճմանազատվել էին ցեղակիցների ընդհանուր մասսայից, մեծ հարստություն կուտակել, ձեռք բերել տնտեսական ու քաղաքական խոշոր ազդեցություն և ստեղծել զինված մարտիկների մշտական հատուկ ջոկատներ, որոնք զգալի դեր էին կատարում առանձնապես պատերազմական գործողությունների ժամանակ։

Բնակչության և գույքի պաշտպանության համար կառուցված կիկլոպյան ամրոցների ցանցն արդեն պատել էր Հայկական լեռնաշխարհը։ Միայն Սևանի ավազանում վերջին տարիներս հայտնաբերված և Գ. Մ. Միքայելյանի կողմից ուսումնասիրված են մոտ 60 ամրոց և ամրացված բնակատեղի։ Պաշտպանական այդ կառույցներն ամրացվում էին հզոր պարսպապատերով, հողաթմբերով կամ շրափոսերով, որոնք անհրաժեշտ լրացվում և կատարելագործվում էին, ստեղծելով ամրությունների ամրոցի սիստեմ։ Իմում է, որ վերոհիշյալ կիկլոպյան կառույցների գերակշռող մասը, հատկապես վաղ շրջանում, բառի իսկական իմաստով ամրոց չի եղել։ Դրանք պարզապես ապաստարաններ էին, ուր հավաքվում էր շրջապատի բնակչությունը վտանգի դեպքում։

Խոշոր ցեղային միություններից շատերը բնդունում էին պետական միավորումները մի, մանավանդ Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավային շրջաններում, որոնք բնակեցված էին հայասական, եափրյան, ուրարտական հզոր ցեղախմբերով։ Հենց սրանք էլ զորեղ պատվար էին կազմում հեթիթական ու ասորական էքսպանսիայի դեմ։

Հայկական լեռնաշխարհի հյուսիսային ցեղերի մեջ պետության կազմավորման ընթացքը ձգձգվել է մինչև մ. թ. ա. առաջին հազարամյակի սկիզբը և չի ավարտվել, քանի որ նրանք նվաճվեցին և միացվեցին ուրարտական պետությանը։

Ըստ ուրարտական գրավոր աղբյուրների, Սևանի ավազանը բնակեցված էր բազմաթիվ ցեղերով, որոնք կազմում էին չորս ցեղային միություններ՝ Ազախունի, Ուելիկուխի, Լուերուխի և Արկուկինի։ Ուելիկուխի երկիրը գտնվում էր Սևանա լճի արևմտյան ափին, Գավառագետի հովտում (ներկայիս Կամո քաղաքի շրջանում), Լուերուխին բնկած էր նրանից հարավ (Ագիրման գյուղի շրջակայքում), իսկ Արկուկինին՝ ավելի հարավ (Զաղալու գյուղի շրջակայքում)։ Հետևաբար Ազախունին անհրաժեշտ է որոնել նշված երկրներից դեպի հյուսիս՝ Սևանի արևմտյան ափին։ Բացի նշված չորս երկրներից, ուրարտական արձանագրությունները հիշատակում են ևս 19 երկիր, որոնք տեղադրվում էին լճի մյուս կողմերում, բարձր լեռներում[1]։

Վերոհիշյալ ցեղերը, ըստ երևույթին, ապրում էին եափեադարյան համայնական հասարակարգի քայքայման գարաշրջանում, որի համար բնորոշ էր բազմաթիվ «երկրների» և «թագա-

---

sical Style, New-York, 1920; Richter G. M., Ancient Gems, from the Evans and Beatty Collections; Richter G. M., The Late „Achaemenian" or „Graeco-Persian" Gems, էջ 32 և հա.։ Richter G. M., Catalogue of Engraved Gems; Batler H. C., Sardis, Leyden, 1922, էջ 85; Young G. M., Ancient India, I, 1946, էջ 33; Лордкипанидзе М. Н., Геммы Гос. музея Грузии, III, էջ 74, 75; Лордкипанидзе М. Н., Иберийские копии с малоазийских гемм.

[1] Г. А. Меликишвили, Наири-Урарту, էջ 66—69։